

Որք դատ թիւրեն որոց դիմեն առ ինքեանս ,  
Կամ ուր գուցեն վէճ եւ ժխտար արծարծ մեծ տան :

Քաջ Ժողովորդ .

Զժողովրդովք հնազանդելոց Աստուածայնոյն ,  
Բանակք գայցեն շրջափակել երկնից զօրուն .  
Որովք իւրեանց հանդերձ կայցեն ծննդովք զերծեալ  
Աստ յարկածից անդ 'ի 'հսեմ' խորոց գբոյն :

Վաթ Ժողովորդ .

Այն ժողովուրդք, որք գժտուեթիւն վրդովադին :  
Սիրեն խուզեն եւ ցանգ զհեա նորուն պնդին ,  
Օտարանան 'ի յարքայէն խաղաղ անուն ,  
Հպատակին սեւադիմեան զօրաց չարին :

Կ . Բագրատունեան  
Մխարնեյի :

Յ. ՀՈՎՈՒԵԱՆ

ԵՒ ԻՒՐ ՎՄՄԱԳԻՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ

Ազգային լրագիրք ոմանք խօսեցան  
արդէն Յ. Հովուեանի հրատարակուած  
մատնի , որ , ինչպէս կ'երեւի , տարածուած է  
գրեան թէ ամեն հայաբնակ քաղաքաց մէջ : Այս  
այլան դակ հրատարակուածինն , որ զուրկ է  
մարդկային համեստախօսութեան ամեն  
պայմաններէ , անշուշտ Ս. Լըմիւսի  
աւանդ եւս հասած է , ե 'ի հարկ է ԱՐԱՐԱՏ  
Մտնագիրն կը փութայ հերքել սոյն  
անշուր ամբաստանագիրն , որով չարաչար  
կ'ամբաստանուի Վեհափառ Կաթողիկոսն : Սակայն , առանց  
Վեհափառ Կաթողիկոսի եւ Սանտալճեան  
Ստեփան Լպիսիոպոսի մէջ պատահած  
անցից խորն թափանցներու ,

որ մեւթ է մեզ համար , Հովուեանի հրատարակուած  
թեան պարունակութիւնն ընդ միայն նկատողութեան  
առնելով կը տեսնեմք , որ այնչափ անպարկեշտ է  
եւ հեռի մարդավարութենէ , որ Պ. Հովուեանն ,  
փոխանակ զայլս ամբաստանելու՝ աւելի զինքն  
կ'ամբաստանէ : Ով որ Հայու սիրտ եւ արիւն  
կը կրէ . ով որ Հայութեան պատիւ կրողաց ,  
ով որ զինքն Հայաստանեայց Լիկեղեցւոց  
զաւակ կը համարի , անհնարին է որ այսպիսի  
անարգ եւ անպատկառ լեզու գործածէ իւր  
Հայրապետին դէմ 'ի սոսկումն պարկեշտ  
լսելեաց եւ 'ի գայթակղութիւն պարզամիտ  
հասարակութեան :  
Պ. Հովուեան ինչու Հռովմէն կը յայտարարէ  
թէ՛ թող բողոքէ եւ կոչէ զիս Կաթողիկոսն ,  
պատրաստեմ իրեն

հետ դատուիլ թիֆլիզի դատարանին մէջ և իմ գրածներս ապացուցանել: Այժմ այսչափ վատահէ իւր գրածներուն վերայ՝ ինչու սոյն յայտարարութիւնն Այմիսի կամ թիֆլիզի մէջ չըրաւ, քանի որ ինքն այն տեղ կը գրանուէր . . . :

Պ. Հովուեան, ընդհանուր Հայրապետի գործոց վերայ խօսած ժամանակ, այնպիսի մասնաւորութեանց, այնպիսի անձնական տգեղ և անհաւատալի նկարագրութեանց կ'իջանէ, որով տարտուրանաց կ'ենթարկէ նոյն իսկ իւր ընդհանուր նկատմամբ գրածներն: Աւստի առաւել քան զայս խօսիլ արժան չ'եմք համարիլ այս սուրբեղ նիւթին վերայ:

### Ն Ա Մ Ա Կ

... Խմբագիր Սիօն ազգագրի Ամագրի:

Մի տարիէն աւելի է, որ 60 տարեկան սղքատ Ամերիկացի մը կը գրտնուի յԱրուսաղէմ. սա՛ այս մէկ տարուան միջոցին մէջ այլոց սպասաւորութիւնն ընելով օրական հացը կը գտնէր, թէեւ իւր վարմունքէն եւ գործին ժամանակ գործածած ձեւերէն կ'երեւէր ցնորած ըլլալը: Սոյն աղքատն մէկ ամիս առաջ 4 կանգուն երկայնութեամբ եւ բաւական հաստութեամբ փայտէ խաչ մը ուսը առած փողոցները շրջի սկսաւ. ան ցորգք երբ իրեն կը հարցնէին՝ թէ ինչու համար խաչն ուսը առած է. կը պատասխանէր՝ թէ ինքն փափաքած է իբր աշակերտ Վրիստոսի նորա պատուիրանին հետեւիլ, որ ըսած է. «Այժմ որ կամիցի զինի իմ դալ ուրացի զանձն, և առցէ զխաչ իւր և եկնացէ զինի իմ»:

Այս խղճուկ Ամերիկացին անգղիւ արէն լեզուաւ առաքելական թուղթ մը կը գրէ տեղւոյս Կառավարչին, որով աշխատած է Վրիստոսնէութիւնն հրաւիրել զՍահմէտականս Կառավարչին միջնորդութեամբ, ըսելով թէ՛ ինքն աստուածակոյս կողմանէ խրկուած Առաքեալ մը ըլլալով՝ ազգարարութիւն կրնէ Սահմէտականաց Վրիստոսնէութիւնը ընդունիլ, ապա թէ ոչ դառն պատիժներ ունին կրելիք և արդէն ժամանակը մօտեցած է: Այս Կառավարիչը քովը կանչել տալով կը հարցնէ իրեն թէ՛ ի՞նչ ազգամամբ այս տեսակ գիր մը գրած է. նա ալ կը պատասխանէ թէ. «Արբ ասիէ 5 տարի առաջ նաւաստիութեան պաշտօն կը վարէի Անգղիոյ նաւատորմի մէջ, որ մը սաստիկ պէկոծութեան հանդիպած է ինք, մէկ կողմէն անձրեւը անդադար կը տեղար, միւս կողմէն սրտումները մինչեւ ծովուն յատակը կը կը խօսէին եւ փայլակները աշխարհս կը լուսաւորէին, նոյն միջոցին որ սաչած երկինք կը նայէի, յանկարծ տեսայ զՎրիստոս իր աթոռոյն վրայ նստած. սա՛ առ խուզողը ի հայնցուածքը՝ ըսաւ. պէտք է որ այժմեան պաշտօնգ թողուս և երթաս Աւետարանս քարոզելու Սահմէտականաց. ըսէ իւրենց որ եթէ չզգատտանան, դարձեալ իրենց հաւատքին հետեւին, թող գիտնան որ սաստիկ կերպիւ պիտի պատժուին: Այս անցապաղ սոյն հրամանին նման թողուցի պաշտօնս եւ ահա կը տեսնեմ որ ժամանակը հասեր է, պէտք է որ առաքելական պաշտօնս կատարեմ, յայտնելով միանգամայն, որ կորսնցնելու ժամանակ չըմնաց. ժամ առաջ յուզըութիւն դարձէք. ահա իմ պարտքս կատարեցի, այսուհետեւ ես անպարտ եմ. բայց սիրտս շատ կը ցաւի որ ինձ չի պիտի